23.12.2020
346-73

ՀՀ ոստիկանության պետ, գնդապետ
պարոն Վահե Ղազարյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

- «Հայկական բնապահպանական ճակատ» նախաձեռնությունն ահազանգել է այն մասին, որ 2020 թվականի ապրիլին մեծ քանակությամբ թռչուններ նստել են Արարատի պոչամբարի մակերեսին և սատկել են, իսկ թռչունների մարմինները ընկերության աշխատակիցները թաղել են: Արդյոք եղե՞լ է նման բան: Որո՞նք են եղել սատկելու պատճառները, իրականացվե՞լ է արդյոք ուսումնասիրություն: Եթե այո, ապա տրամադրեք ուսումնասիրության արդյունքները:

Տեղեկացնում ենք, որ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը ուղղորդել է տեղեկությունը ստանալ ՀՀ ոստիկանությունից:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am